**Արձանագրություն N 2-2**

**ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/7 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Ագարակի Տ. Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոցի նորոգման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 14.08.2025թ.

ժամը 10:40

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ս. Գասպարյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Խաչատրյան |
| | Ա. Աչոյան |
| | Ս. Իշխանյան |
| | Ա. Եղիազարյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Գ. Հակոբյան |

**1. Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի ուսումնասիրության մասին**

---

(Ս. Գասպարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ Առողջապահության նախարարությունից սահմանված ժամկետում գրություն չի ստացվել, ՀՀ պետական եկամուտների կոմիտեից, ԿԳՄՍ նախարարությունից, ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամից, Երևանի քաղաքապետարանից, Թալինի և Գյումրու համայնքապետարաններից ստացված գրությունների համաձայն, գնման ընթացակարգի մասնակից «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին:

1.2 Գնման ընթացակարգի մասնակիցներ՝ «Վաղժան» ՍՊԸ և «ՄՈՆՈԼԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կոնսորցիումի, «Ագարակ» ԲԲԸ-ի հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

**<u>«Վաղժան» ՍՊԸ և «ՄՈՆՈԼԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կոնսորցիում</u>**

- դիմում-հայտարարության մեջ «Վաղժան» ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումով բացվում է «ՄՈՆՈԼԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, իսկ «ՄՈՆՈԼԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումով իրական շահառուների https://www.e-register.am էջը չի բացվում:

**<u>«Ագարակ» ԲԲԸ</u>**

- դիմում-հայտարարության մեջ 1) կետում նշված չէ « ... և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/7 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին ներկայացվող պահանջներին»:
- հայտով հավելված N 1.2-ը ներկայացվել է որպես հավելված N 1.1

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «Վաղժան» ՍՊԸ և «ՄՈՆՈԼԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կոնսորցիումին, «Ագարակ» ԲԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 15.08.2025թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումները ներկայացվելու դեպքում, հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/7 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender4@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0:*

## 2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

----------------------------------------------------------------------

(Ս. Գասպարյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 18.08.2025թ. ժամը 11:45-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Ս. Գասպարյան

Անդամներ՝ ---------------------------------------- Ա. Խաչատրյան

---------------------------------------- Ա. Աչոյան

---------------------------------------- Ս. Իշխանյան

---------------------------------------- Ա. Եղիազարյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Գ. Հակոբյան